

պէս և Փոգեկը գլխաւորապէս էսքիզներ է նկարել. սակայն աւելի մեծ տաղանդով, էտիւդը, առհասարակ, ուրուագիծ է ապագայ պատկերի համար, բայց կարծէք Ֆոգելին վիճակուած չէ իր էտիւդներէից յետոյ պատկերներ ստեղծելու: Նրա (№ 171) «Պոնաւ երեկոյ» պատկերի մէջ ջուրը նկարուած է վարպետօրէն, ինչպէս և ամպոտ մութ երկինքը: Պատկերի պակասութիւնը կայանում է յետեւի նաւերի մէջ: Նաւերի շրջագծերը շատ են սուր և յետեւի կողմը լուսաւորուած է, փոխանակ մութ լինելու:

Փիրադովը շատ չնչին բան է ի ցոյց դրել, որ արժէք նրա մասին խօսել, իսկ Փրանկէ արձանագործը տուել է ֆորմի և համաչափութեան կողմից այնչափ թոյլ գործեր, որ միմիայն գեղարուեստի տարօրինակ ըմբռնումով կարելի է բացատրել...

Գեղասէր

III

Թիֆլիսի Հայոց Դրամ. Ընկ. ներկայացումները

(«Պատուի համար» դրամա չորս գործողութեամբ Շիրվանզադէի).

Թիֆլիսի Հայոց Դրամատիկական Ընկերութեան խումբը յունուարի 3-ին վերսկսեց իր ներկայացումները: Պ. Շիրվանզադէի նոր պիեսան՝ «Պատուի համար» այդ երեկոյ մեծ հասարակութիւն էր գրաւել թատրոն. կարելի է ասել, որ այդ հետաքրքրութիւնը՝ դէպի հայ հեղինակի ինքնուրոյն և նոր գործը՝ բաւարարութիւն ստացաւ:

Պ. Շիրվանզադէն հայ բեմին տուեց մի բաւական լաւ պիեսա:

Նիւթը վերցրած է վաճառականական միջավայրից, որ ինչպէս ամեն տեղ, նոյնպէս և մեզ մօտ տարաբախտաբար հարուստ է բարոյականութեան ամենատիպական պահանջներէ: Է՛մ ծանր արարքներով: Նիւթապաշտութիւնը, որ մարդկային հոգու ամենաազնիւ հիւթերը քամելու գերազանց յատկութիւնն ունի, վերջ ի վերջոյ զգացմունքներով օժտուած բանական արարածներին դարձնում է մի գազան, մի մոլոխ, որ միայն լափել, ոչնչացնել գիտէ: Մանր զարդանքներով իր գոյութիւնը զարդարող անհատը, որ սկզբում չարիքը գործում էր իր անձնական բարօրութեան համար, վերջ ի վերջոյ մոռանում է նոյնիսկ այդ նպատակը և շարժւում է, ինչպէս աւտոմատ, աւերած ու արցունք տարածելով իր շուրջը բոլոր անգիտակցութեամբ:

Չափերը փոխուում են, բարոյական հասկացողութիւնները գլխիվայր դառնում, և մարդը լողում է իր ստեղծած ճահճի մէջ նողկալի երջանկութեամբ:

Ահա ընդհանուր խօսքերով այն տիպը՝ որ հեղինակը ներկայացրեց մեզ Անդրէաս էլիզբարեանի մէջ: Այս մարդը՝ որ առաջ է եկել կեանքի նկուղներում, ուր սողում է խեղճութիւնը, կարողացել է կամաց-կամաց բարձրանալ թուք ու մուր ուտելով, անարգանք կրելով, և որ գլխաւորն է, անդադար խաբելով: Նիւթական յաջողութիւնները, հարստութեան փայլը ծածկել են յանցանքները երկար ժամանակ, բայց ոչ վերջնականապէս:

Մեծ ոճիրները սովորաբար բացւում են փոքրիկ անզգուշութիւններից ու անհոգութիւնից: Իր առևտրական գործի ընկեր Օթարեանի մահից յետոյ էլիզբարեան գրկում, կողոպտում է նրա որբերին, մոռանալով մի քանի փաստաթղթեր, որ Օթարեանի այրին պահում է խնամքով և երբ իր որդին՝ Արտաշէսը մեծանում է, յանձնում է նրան: Արտաշէս Օթարեան՝ այսպիսով դառնում է, որպէս մարմնացած վրէժխնդրութիւն էլիզբարեանի համար, մի մշտական սպառնալիք, որ կարող է խորտակել հարուստ յանցաւորի գոռոզ բախտաւորութիւնը:

Էլիզբարեան հնար է փնդրում ազատուելու այդ հարուածից, նա գիտէ, որ Օթարեանը ոչ միայն կը ստանայ հարբստութեան կէսը, այլև նրան կը խայտառակի, որպէս գողի: Այստեղ է մէջ ընկնում Մարգարիտը, էլիզբարեանի աղջիկը, որին սիրում Արտաշէսը: Այդ սէրը փոխադարձ է: Մարգարիտը այսպիսով դառնում է դրամայի կետրոնական անձնաւորութիւնը. նա մի կողմից չի հաւատում, որ իր հայրը անազնիւ մարդ է, միւս կողմից չի կարողանում հասկանալ, որ Արտաշէս Օթարեանը, իր սիրած իդէալական երիտասարդը՝ թոյլ կը տայ իրան ստոր, սուտ բամբասանքներ սիրած աղջկայ հօր դէմ:

Մարգարիտը երկու կրակի մէջ է. ելքը գտնում է Օթարեանը: Նա յանձնում է փաստաթղթերը Մարգարտին, որ սա ինքը անձամբ ստուգի և համոզուի, թէ որքան իրաւացի են իր պահանջն ու մեղադրանքները: Այդ թղթերը ջախջախիչ են. աղջիկը համոզւում է, որ իրանց ծով հարստութիւնը գողութեան արդիւնք է և իր հայրը մի անազնիւ մարդ: Նրա անարատ հոգին ցնցւում է, նա ըմբոստանում է այս աստիճան ցածութեան դէմ, որ գործել է հարազատ հայրը: Ու այսպիսով սկսւում է նրա համար խորին յուզումների ծանր, տանջող կացութիւն:

Նա օգնող, խորհրդատու չունի. մայրը մի բարի թոյլ կին

է։ Սա երկար տարիներ ընթացքում տեսել, հասկացել է ամուսնու ընդ որ աղտեղութիւնները, բայց ստիպուած է եղել լռել, տանել, համբերել, և վերջիվերջոյ դարձել է մի կամագուրկ, ոչնչացած էակ։ որ միայն արտասուել գիտէ։ Քոյրը՝ Ռոզալիան մի դատարկ պճնասէր է։ Մի եղբայրը անառակ բոն-վիվան է, միւսը՝ ինժեներ, որ նոյնքան նիւթապաշտ է, նոյնքան չարագործ, որքան իր հայրը, միայն աւելի կիրթ, աւելի ժամանակակից ձեւերով։ Կայ և ժօրեղբայրը՝ Սաղաթէլ, նոյնպէս մի փարիսեցի, անսիրտ արարած, որ իբրև իր փեսայի առևտրական գործերին օժանդակող և խորհրդատու՝ կամաց-կամաց կողոպտում է նրան, ինչով և ինչպէս կարող է։

Այսպիսով դրամայի բոլոր ծանրութիւնը կետրոնանում է Մարգարիտի հոգու մէջ. նա է, որ տառապում է բոլորի փոխարէն և ի վերջոյ զոհ գնում, որպէս փրկութեան նոխադր։

Հայրը՝ էլիզաբեան, իր հին յանցանքը քաւելու համար գործում է մի նոր ոճիւր։ Նա գիշերով գողանում է աղջկայ սենեակից Օթարեանի փաստաթղթերը և վառում։ Մարգարիտը տանել չի կարող հօր գործած այս նոր և անասելի ստորութիւնը, ինքը պատուի խօսք էր տուել Օթարեանին յետ տալ նրան փաստաթղթերը։ Լուծումը վրայ է հասնում, և Մարգարիտը եթէ ոչ իր հօր, գոնէ սեփական պատիւը փրկելու համար վերջ է տալիս իր կեանքին։

Ահա համառօտ կերպով դրամայի բովանդակութիւնը։ Մենք չենք կանգ առնի բոլոր գործող անձանց վրայ առանձին առանձին, կ'ստենք մի քանի խօսք գլխաւորների մասին։

Ամենայաջողուած տիպը անկասկած Անդրէաս էլիզաբեանն է։ Հեղինակը կարողացել է այդ տիպի մէջ բաւական զօրեղ կերպով արտայայտել մութ գործերի, անազնիւ, ստոր արարքների, ետսէր, նիւթապաշտ վաճառականի ստոր հոգին։

Էլիզաբեանը մի «փողի հերոս է»։

Աղջիկը՝ Մարգարիտը, որ հասարակական արդարադատութիւնն ու խիղճն է ներկայացնում, բաւականաչափ ցասում չունի ծանր արարքների հանդէպ։ Առհասարակ իբրև հերոսուհի, նրա հոգին մի փոքր աւելի ուժեղ կարող էր լինել։ Իր հօրը և շրջապատը լաւ ճանաչելուց յետոյ անհասկանալի է մընում, որ նա միամտաբար պահում է իր մօտ վտանգաւոր փաստաթղթերը, փոխանակ իսկոյն վերադարձնելու տիրոջ։ Նոյնպիսի անհասկանալի միամտութեան օրինակ է տալիս և Օթարեան, որ լաւ ճանաչելով էլիզաբեան ընտանիքը, փոխանակ թղթերը իր ներկայութեամբ ցոյց տալու Մարգարտին, թողնում է նրա մօտ։ Որին սիրուց բղխած հաւատը դէպի

Մարգարիտը, այստեղ հագիւ թէ արդարացուցիչ հանգամանք հանդիսանայ, աւելի ճիշտ կը լինէր ասել, որ հեղինակը մի փոքր արուեստականութիւն է թոյլ տուել:

Արտաշէս Օթարեանն էլ լրիւ տիպ չէ. ըստ երևոյթին հեղինակը փորձել է նրա մէջ դնել ազնիւ ասպետութիւն, հերոսական մեծահոգութիւն: Նա ասում է խոշոր բառեր, պատրաստ ինչ որ զոհեր յանձն առնել, բայց վերջ ի վերջոյ կարծես նրան հետաքրքրում է իր սեփական ժառանգութիւնը, որ նա պահանջում է էլիզարեանից, քան որևէ աւելի վեհ նպատակ:

Դրամայի ինտրիգայի մէջ նոյնպէս կայ մի թերութիւն: Երկրորդ, երրորդ գործողութիւնների մէջ համարեա ամեն ինչ ասւում է. հանդիսատեսը գիտէ, որ փաստաթղթերը պէտք է գողացուին, որ Մարգարիտը ինքնասպանութիւն կը գործի: Այս հանգամանքը բնականապէս թուլացնում է հետաքրքրութիւնը դէպի դրամայի վախճանը: Անօգուտ և ձանձրալի մեղորոշում է դարձրել հեղինակը այն տեսարանը, ուր էլիզարեան գողանում է փաստաթղթերը աղջկայ սենեակից: Նրա տանջանքները կեղծ են. մի այնպիսի բիրտ, ստորհոգի արարած, այդքան խղճի խայթի ընդունակ չէր կարող լինել:

Անկասկած Շիրվանզադէն ազդուել է Օկտաւ Միրբօի յայտնի դրամայից, «Փողի հերոսից»: Երկու պիեսաների մէջ արտաքին աչքի ընկնող նմանութիւն կայ: Երկու դէպքում էլ փողի հերոսը հայրն է, բողոքողը՝ աղջիկը. մայրը՝ մի անգոյն՝ բայց բարի արարած է. կայ մի հաշուապահ, որ յիշեցնում է Միրբօի պիեսի մէջ պարտիզպանը: Զի մոռացուել և «Փողի հերոսին» թուղթ ստորագրել տալու տեսարանը, որ կատարում է Սաղաթէլը: Այս նմանութիւնը սակայն չի նսեմացնում պիեսայի արժէքը:

Պ. Շիրվանզադէի դրաման, չնայելով իր մի քանի թերութիւններին, կարելի է յաջողուած համարել թէ բեմական տեսակէտից, թէ տիպերի ընտրութեամբ և թէ գործողութեան յաջորդական զարգացմամբ: Այս յաջողութիւնը կարծում ենք, մասամբ բացատրւում է նրանով, որ հեղինակը այս անգամ թողել է à la Իբսէն ճանր խօսք՝ ասելու իր յաւակնութիւնը և պարզ նպատակ է դրել—ներկայացնել մեր իրականութիւնը գեղարուեստական հնարաւոր ճշտութեամբ:

Եւ լաւ է, որ այդպէս է:

Ճնոր խօսքերը՝ դժուարութեամբ են ասւում. նրանց երկունքը շատ ծանր է, որպէս զի հայկական միտքը այժմ կարողանար տանել: Այն էլ լաւ է, եթէ հայ հեղինակին յաջող-

ւում է մեր այս կամ այն միջավայրը իր լաւ և վատ կողմերով բեւ հանել և բաց անել մեր կեանքը կրճող վերքերից մէկն ու մէկը: «Պատուի համարը» մեր հասարակական մարմնի վրայ մի այդպիսի շարաւալից վերքի պատկերն է:

Ոսկը լաւ անցաւ իր ամբողջութեամբ: Հնդկնակը բուռն ծափահարութիւնների առարկայ դարձաւ:

Ա.

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ ԲԱՄԲԱԿԱԳՈՐԾՆԵՐԻ ՀԱՄԱԺՈՂՈՎ- ՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ

Ինչպէս յայտնի է բամբակագործութեամբ Ռուսաստանում զբաղում են Անդրկովկասում, Թուրքաստանում և Անդրկասպեան երկրներում: Այդ երկրների մէջ առաջին տեղն է բռնում Թուրքաստանը, որ տալիս է տարեկան 5—5½ միլիոն պուդ բամբակ, յետոյ գալիս է Անդրկովկասը (մօտ 700 հազար պուդ), իսկ Անդրկասպեան երկիրը բռնում է վերջի տեղը, մօտ 300—400 հազար պուդ արդիւնաբերութեամբ:

Թէ ինչ արագութեամբ է զարգանում բամբակագործութիւնը Ռուսաստանում, երևում է այն փաստից, որ դեռ մի 14—15 տարի առաջ Ռուսաստանի ամբողջ արդիւնաբերութիւնը չէր հասնում 2 միլիոն պուդի, իսկ այժմ նա աւելի քան եռապատկուել է: Պէտք է առհասարակ նկատել, որ բամբակի կուլտուրան XIX դարու երկրորդ կիսում արել է հսկայական առաջադիմութիւն:

Մինչդեռ մի դար առաջ, 1801 թուին, ամբողջ երկրագնդի վրայ ստացուել է 14 միլիոն պուդ բամբակ, այժմ միայն Ամերիկան տալիս է 10—11 անգամ աւելի շատ, այսինքն մօտ 150 միլիոն պուդ:

Երկրորդ տեղն է բռնում Հնդկաստանը 35 միլ. պուդ. յետոյ գալիս է Չինաստանը 20 միլ. պուդ, Եգիպտոսը 15 միլ. պուդ և Ռուսաստանը 6—7 միլ. պուդ:

Այս վերջին քանակութիւնը չի կարողանում բաւականութիւն տալ ռուս գործարանատէրերին, այնպէս որ նրանք ստիպուած են տարեկան մօտ 10 միլ. պուդ էլ առնել ուրիշ երկրներից, վճարելով դրա համար մօտ 90—100 միլ. ըուբլի:

Այսպիսի մեծ քանակութեամբ օտար բամբակի պահանջ